Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017 ԹՎԱԿԱՆԻ 12 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017 թվականի 12 ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում իրականացվել են.

1. Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժին

2017թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում սովորում են ընդհանուր թվով 885 սովորողներ, այդ թվում.

- **Ակադեմիայում՝** 707 սովորող, այդ թվում՝ մագիստրատուրայում՝ 77 սովորող, որից առկա անվճար ուսուցմամբ՝ 19 սովորող, հեռակա ուսուցմամբ՝ 58, իրավագիտության ֆակուլտետում՝ 363 սովորող (առկա անվճար ուսուցմամբ բակալավրիատում՝ 129, իսկ առկա վճարովի ուսուցմամբ՝ 234), հեռակա ուսուցման ֆակուլտետում՝ 267 սովորող,
- **Քոլեջում՝** 106 սովորող,
- **Ուսումնական կենտրոնում՝** 72 սովորող (2017-2018 ուստարվա 2-րդ հոսք):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ավարտել են ընդհանուր թվով 411 շրջանավարտներ, այդ թվում.

– **Ակադեմիայի մագիստրատուրան՝** առկա անվճար ուսուցմամբ 4 շրջանավարտ, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 21 շրջանավարտ,

– **Ակադեմիայի բակալավրիատը՝** իրավագիտության ֆակուլտետը՝ առկա անվճար ուսուցմամբ՝ 44, առկա վճարովի ուսուցմամբ՝ 24, հեռակա ուսուցման ֆակուլտետը՝ 56 շրջանավարտ,

– **Քոլեջը՝** 35 շրջանավարտ,

– **Ուսումնական կենտրոնը՝** 227 շրջանավարտ (2016-2017 ուստարվա 2-րդ և 3-րդ հոսքեր, 2017-2018 ուստարվա 1-ին հոսք):

Հաշվետու ժամանակահատվածում ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունք դրսևորելու համար խրախուսվել են ոստիկանության կրթահամալիրի թվով 89 ծառայող և 2 տեխնիկական սպասարկող, որոնցից 1 ծառայող ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով: ՀՀ ոստիկանության պետի հրամանով՝ 6 ծառայող, այդ թվում՝ /պարգևատրվել են հուշանվերով, 1 ծառայող «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով, 1 ծառայող «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով, 1 ծառայողի շնորհվել է վաղաժամկետ «Ոստիկանության գնդապետ» կոչում, 1 ծառայողի՝ վաղաժամկետ «Ոստիկանության մայոր» կոչում, 1 ծառայողի՝ տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր «Ոստիկանության փոխգնդապետ» կոչում/: ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարի հրամանով 14 ծառայող պարգևատրվել է «Ոստիկանության զորքերում գերազանց ծառայության համար» 2-րդ աստիճանի կրծքանշանով: ՀՀ ոստիկանության պետի տեղակալի հրամանով պարգևատրվել են ՀՀ դրամով 36 ծառայող և 13 տեխնիկական սպասարկող, 3 ծառայողի հայտարարվել է «Շնորհակալություն», ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով 10 ծառայողի հայտարարվել է «Շնորհակալություն», իսկ ՀՀ «Դինամո» ՄՀԿ նախագահի կողմից 14 ծառայող պարգևատրվել է «Առաջատար մարզիկ» մեդալով:

Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի ծառայողներից ՀՀ ոստիկանությունում ծառայությունից ազատվել են թվով 4 ծառայողներ՝ 1-ը անձնական նախաձեռնությամբ, 3-ը կենսաթոշակի անցնելու կապակցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում կրթահամալիրից ազատվել է ընդհանուր թվով 52 սովորող (30-ը՝ ակադեմիայից, /9-ը՝ հեռակա ուսուցման ֆակուլտետից, 5-ը՝ իրավագիտության ֆակուլտետի

առկա անվճար ուսուցումից, 16-ը՝ իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցումից/, 14-ը՝ քոլեջից և 8-ը՝ ուսումնական կենտրոնից):

Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 2 գլխավոր խմբի, 1 ավագ խմբի ծառայող և 12 սովորող: Կատարվել է 3 ծառայողական քննություն:

Նշված ժամանակահատվածում բարձր առաջադիմության, սպորտային բնագավառում մրցանակային տեղեր գրավելու և բարեխիղճ ծառայության համար կրթահամալիրի սովորողներից խրախուսվել են ընդհանուր թվով 244 սովորող:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ակադեմիայի 7 և քոլեջի 5 սովորողի խրախուսման կարգով նշանակվել է ՀՀ ոստիկանության պետի անվանական կրթաթոշակ:

2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչություն

Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժին

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի կողմից կոորդինացվել, կազմակերպվել և վերահսկվել է կրթահամալիրի ուսումնական գործընթացը:

Կազմակերպվել են կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի և մագիստրատուրայի, ինչպես նաև քոլեջի և ուսումնական կենտրոնի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքները: Կազմվել և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցվելուց հետո կրթահամալիրի պետի հաստատմանն են ներկայացվել շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ժամանակացույցերը, որոնց համաձայն կրթահամալիրի ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը:

Իրականացվել են 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի և 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կրթահամալիրում պայմանագրային հիմունքներով դասավանդող դասախոսների ուսումնական գործընթացում ներգրավելու աշխատանքները:

Կազմվել և կրթահամալիրի պետի հաստատմանն են ներկայացվել կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցերը:

Կրթահամալիրի գիտական խորհրդում քննարկվել և կրթահամալիրի պետի կողմից հաստատվել են ակադեմիայի և քոլեջի 2017թ. ընդունելության ուսումնական պլանները:

Կազմվել և հաստատվել են կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային ուսումնական պլանները՝ ըստ կուրսերի և ուսուցման ձևերի:

Կազմվել են կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի 2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և 2017-2018 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքների դասացուցակները:

Ապահովվել է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի և ձևաթղթերի ձեռքբերման գործընթացը:

2017-2018 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար կազմվել են կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ամբիոնների ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածությունները և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհատական ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկները:

Ապահովվել են սովորողների առաջադիմության և հաճախումների հետ կապված /ամսական/ վերլուծական աշխատանքները:

Կազմակերպվել և ստուգվել է կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության և քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետներում դասավանդվող առարկաներից անբավարար գնահատականներ ստացած սովորողների համար իրականացված

լրացուցիչ պարապմունքների անցկացման ընթացքը: Գործընթացի կազմակերպման արդյունքներով կազմվել են տեղեկանքներ, կատարվել են քննարկումներ և ներկայացվել են առաջարկություններ լրացուցիչ պարապմունքները արդյունավետ և որակյալ կազմակերպելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՌԴ-ից ստացված մասնագիտական պարբերական մամուլը տրամադրվել է ընդհանուր գրադարանին՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ուսումնասիրելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի, Կրասնոդարի համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի և Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի ակադեմիայի կողմից ոստիկանության կրթահամալիրին են ուղարկվել մասնագիտական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնցով համալրվել է կրթահամալիրի ընդհանուր գրադարանի գրքային ֆոնդը:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր գրադարանը համալրվել է 219 անուն /951 օրինակ/ մասնագիտական, 6 անուն /20 օրինակ/ գեղարվեստական գրականությամբ և 14 անուն /25 օրինակ/ էլեկտրոնային սկավառակներով:

3. Միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին

Բաժնի կողմից կազմակերպվել և ապահովվել են հետևյալ միջազգային միջոցառումները.

1. Ոստիկանության կրթահամալիրի թվով 28 ծառայողների 16 գործուղումները Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Լեհաստանի, Մակեդոնիայի, Ղազախստանի և Հունգարիայի հանրապետություններ,

2. Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի և Իրանի Իսլամական Հանրապետության ոստիկանության պատվիրակությունների ճանաչողական այցերը ՀՀ ոստիկանության կրթահամալիր,

3. ոստիկանության կրթահամալիրի ծառայողների մասնակցությունը ԱՄՆ դեսպանության կողմից կազմակերպված «Քրեական գործերի քննության հիմունքներ», «Կանայք ոստիկանությունում» դասընթացներին և Եվրոպական Միության կողմից կազմակերպված «Կրթական հաստատությունների առաջխաղացում՝ մարդկային գործոնի միջոցով» թեմայով համաժողովին,

4. հունիսի 20-ից 23-ը կրթահամալիրում անցկացված «Հասարակության և ոստիկանության համագործակցության արդիական խնդիրներն իրավակարգի ամրապնդման գործում» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովը,

5. հուլիսի 17-ից 21-ը Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի պատվիրակության (սովորողների) այցը կրթահամալիր՝ մասնակցելու «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական կարգավորումը», «Պետության ինքնիշխանությունը գլոբալիզացիայի ժամանակաշրջանում» և «ՀՀ Ազգային ժողովի իրավական կարգավիճակը սահմանադրական բարեփոխումների համատեքստում» թեմաներով դասախոսություններին,

6. Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի (ԶՈՒԺՎ) կողմից կազմակերպված «Ընտանեկան բռնության դեմ պայքար» և «Մարդկային ռեսուրսների կառավարում» թեմաներով ինչպես նաև Հայ ֆրանսիական 2017թ. գործողությունների ծրագիրի շրջանակներում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Ամբոխի ժողովրդավարական կառավարում» թեմայով դասընթացները,

7. ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի դասախոսների կողմից ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Վարչական ընթացակարգերը ՆԳԲ գործունեության մեջ» և «Սովորողների ուսուցման պրակտիկայի կատարելագործում» թեմաներով դասախոսությունները և «Պայքար ահաբեկչության դեմ» թեմայով դասընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում.

- աշխատանքներ են տարվել Ղազախստանի Հանրապետության Ալմաթայի Մ. Եսբուլատովի անվան ակադեմիայի, Ուկրաինայի Ներքին գործերի ազգային Ակադեմիայի և Օդեսայի պետական համալսարանի, Մոլդովայի Հանրապետության ՆԳՆ Շտեֆան Չել Մառեյի ակադեմիայի և

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հանրային անվտանգության համալսարանի հետ համագործակցության արձանագրություններ ստորագրելու ուղղությամբ,

• աշխատանքներ են տարվել Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիայի (AEPC) հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ, որի արդյունքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրը դարձել է ասոցիացիայի (AEPC) անդամ:

• փոխըմբռնման Հուշագիր և համագործակցության պայմանագիր է ստորագրվել Ուկրաինայի Ներքին գործերի Լվովի պետական համալսարանի և Լեհաստանի Հանրապետության ՆԳՆ Շիթնոյի ոստիկանության ակադեմիայի հետ:

• կազմակերպվել և ապահովվել են «Կրթություն XXI դար» EXPO 2017 և «Կրթություն և կարիերա EXPO 2017» 17-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներին կրթահամալիրի մասնակցությունը,

• ապահովվել է «edupolice.am» կայք-էջի տեղեկատվական համալրվածությունը, կրթահամալիրում տեղի ունեցող գիտական, մշակութային և այլ բնույթի տեղեկությունների լուսաբանումը (անհրաժեշտության դեպքում նաև անգլերեն և ռուսերեն թարգմանություններով):

• պատշաճ կերպով պատասխաններ են ուղարկվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային փոստով ստացված թվով 238 տեղեկատվական հարցումներին,

• ՀՀ ոստիկանության կրթահամալիրի արտաքին կապերի զարգացման եվ միջազգայնացման ռազմավարական ծրագրի միջոցառումների պլանի շրջանակներում անցկացվել են տեղեկատվական սեմինարներ սովորողների և դասախոսների համար:

4. Գիտական աշխատանքների բաժին

2017 թվականի հունվար ամսին ասպիրանտուրայի ընդունելության վերաբերյալ գրություններ են ուղարկվել ոստիկանության ստորաբաժանումներ, որի արդյունքում ներկայացվել են 3 հայտեր: Նույն ժամանակահատվածում գիտբաժին է ներկայացվել տեղեկանք՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ 1 ասպիրանտի ատենախոսության թեման հաստատվելու և գիտական ղեկավար նշանակվելու վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ 1 ասպիրանտ և 1 հայցորդ 2017 թվականին հաջողությամբ պաշտպանել են ատենախոսությունները:

Պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ. Հետազոտողի պատրաստման կրթական ծրագիր» որոշման նախագիծը:

Գիտբաժնի անձնակազմը մասնակցել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի որակի ապահովման խմբի կողմից կազմակերպված դասընթացներին:

Ընտրվել և կրթահամալիրի էլեկտրոնային պահոցում/գրադարանում/ տեղադրվել են նյութեր, որտեղ ընդգրկվել են հայրենական և արտասահմանյան հեղինակների շուրջ 50 գիտական ձեռնարկներ և ժողովածուներ:

Կազմակերպվել է «Հասարակության և ոստիկանության համագործակցության արդիական խնդիրներն իրավակարգի ամրապնդման գործում» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովը:

Համակարգվել է կրթահամալիրի ամբիոնների գիտական գործունեությունը և գիտական խմբակների կատարած աշխատանքները:

Պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ. Հետազոտողի պատրաստման կրթական ծրագիր» որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման նախագիծը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտների ուսումնական պլանների նախագծերը:

Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հեղինակած շուրջ 5 գիտական հոդվածներ ուղարկվել են արտասահմանյան երկրների բուհերի հրատարակչություններ տպագրելու համար: Տպագրվել է «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի 3-րդ և 4-րդ

համարները, որտեղ հրատարակված 31 հոդվածներից 8-ը Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հոդվածներն են:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով Գիտական աշխատանքների բաժնի կողմից իրականացվել են Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ամբիոնների կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների 2016-2017 ուստարվա արդյունքների ամփոփման և գնահատման աշխատանքները: Արդյունքում լավագույն ճանաչված ամբիոնին շնորհվել է շնորհակալագիր և փոխանցիկ խորհրդանիշ:

Կազմակերպվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելությունը, արդյունքում ընդունվել են 2 ասպիրանտ:

Գիտբաժնի կողմից իրականացվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողների գիտական խմբակների 2016-2017 ուստարվա ընդհանուր աշխատանքների ամփոփումը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել է 1 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ և 19 գիտական հոդվածներ:

5. Վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետ

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամաններով հաստատված ժամանակացույցերի 2017թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել են վերապատրաստման դասընթացներ 27 խմբերի հետ /470 ծառայող/:

Միևնույն ժամանակ ՀՀ ոստիկանության պետի 26.09.2016թ. թիվ 2560-Ա հրամանի պահանջների համաձայն անցկացվել են ՀՀ ոստիկանությունում հետաքննության գծով միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների մասնագիտական դասընթացներ՝ 3 խումբ / 43 ծառայող/:

Ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամաններով ճանապարհային ոստիկանության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար կազմակերպվել և անցկացվել են վերապատրաստման դասընթացներ՝ 1 խումբ /7 ծառայող/:

Իսկ ի կատարումն ՀՀ ոստիկանության կադրերի վարչության պետի համապատասխան գրությունների պահանջների ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել են երկշաբաթյա վերապատրաստման դասընթացներ՝ ՀՀ ոստիկանությունում միջին խմբի պաշտոններում նշանակված ծառայողների համար՝ 3 խումբ /31 ծառայող/:

Ի կատարումն ՀՀ ոստիկանության կադրերի վարչության պետի համապատասխան գրության՝ կազմակերպվել և անցկացվում են ՀՀ ոստիկանության միջին խմբի պաշտոններում նշանակված ծառայողների եռամսյա վերապատրաստման դասընթացներ՝ 3 խումբ /75 ծառայող/:

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի և ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 23-ի թիվ 174-Ն որոշման պահանջների ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվելու կապակցությամբ վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում 4 խմբերի համար կազմակերպվել և անցկացվել են դասընթացներ, որոնցում ընդգրկված են եղել թվով 7 ծառայողներ:

Միաժամանակ ս/թ հունիս-դեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դեսպանատան կողմից 4 խմբերում՝ 66 քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների հետ անցկացվել են թվով 4 դասընթացներ«Կրիմինալիստիկա» առարկայի շրջանակներում՝ «Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտում »թեմայով:

Այսպիսով 2017 թվականի 12 ամիսների ընթացքում ֆակուլտետում անցկացված վերապատրաստման դասընթացներում ընդգրկված են եղել 636 ծառայող /ն.ժ. 2016թ - 1349 ծառայող/, իսկ ըստ խմբերի՝ 43 խումբ, /ն.ժ. 2016թ - 65 խումբ/:

6. Ակադեմիա

Իրավագիտության ֆակուլտետ

2017թ. հունվար-մարտ ամիսներին կազմակերպվել և իրականացվել է 2016-2017թթ. ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի առկա անվճար ուսուցման քննաշրջանը, որին մասնակցել են թվով 134 սովորող (մեկ սովորող ազատվել է ակադեմիայից անբավարար գնահատականներ ստանալու պատճառով), որից դրական են ստացել 96 սովորող: 1-ին վերահանձնմանը մասնակցել են 38 սովորող, որից դրական են ստացել 22-ը, 2-րդ վերահանձնմանը մասնակցել են 16 սովորող,որոնք ստացել են դրական գնահատականներ:

/նույն ժամանակահատվածում/այսուհետ ն.ժ./2016թ. մասնակցել են թվով 151 սովորող: Բոլորը ստացել են դրական գնահատականներ/:

2017թ. հունվար-մարտ ամիսներին կազմակերպվել և իրականացվել է 2016-2017թթ. ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման քննաշրջանը, որին մասնակցել են թվով 195 սովորող, որից 8 սովորող քննաշրջանի ընթացքում մեկնել են ժամկետային զինծառայության: 21 սովորող վերադարձել է ժամկետային զինծառայությունից: Քննաշրջանի հիմնական փուլում 108 սովորողներ ստացել են դրական գնահատականներ: 1-ին վերահանձնմանը մասնակցել են 79 սովորող (մեկ սովորող տեղափոխվել է առկա անվճար ուսուցման), որոնցից դրական են ստացել 68 սովորողներ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է 10 սովորող և ստացել են դրական գնահատականներ:

/ն.ժ.2016թ. մասնակցել են թվով 191 սովորող, որից 9 մեկնել են զինծառայության: 15-ը վերադարձել զինծառայությունից:/

Հսկողություն է իրականացվել ուսումնական պարապմունքների հաշվառման մատյաններում, քննական տեղեկագրերում և թերթիկներում, ստուգման գրքույկներում սովորողների առաջադիմության հաշվառման նկատմամբ:

2016-2017թ. ուստարվա ընթացքում ամփոփիչ քննություններին մասնակցել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի թվով 68 սովորող (վճարովի՝ 24, անվճար՝ 44), որից դրական գնահատականներ են ստացել 64-ը: Վճարովի կրթաձևից 4 սովորող չեն անցել պետական ատեստավորումը:

2017-2018 ուստարվա քննական արդյունքներով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետ են ընդունվել 119 դիմորդ (վճարովի՝ 77, անվճար՝ 42):

2017 թվականի համապատասխանաբար սեպտեմբերի 11-ից 27-ը կազմակերպվել և իրականացվել է 2016-2017 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի առաջին վերահանձնումները:

2017թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում ըստ կուրսերի սովորում են՝

1-ին կուրս՝ 119 սովորող (վճարովի՝ 77, անվճար՝ 42),
2-րդ կուրս՝ 94 սովորող (վճարովի՝ 64, անվճար՝ 30),
3-րդ կուրս՝ 77 սովորող (վճարովի՝ 53, անվճար՝ 24)
4-րդ կուրս՝ 80 սովորող (վճարովի՝ 45, անվճար՝ 35)

2017 թվականի հոկտեմբերի 2-18-ը ներառյալ կազմակերպվել և իրականացվել է 2016-2017թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա վճարովի և անվճար ուսուցման սովորողների ակադեմիական պարտքերի մարման 2-րդ փուլը, որին մասնակցել են՝

Անվճար՝

1. 1-ին կուրս՝ 10 սովորող,
2. 2-րդ կուրս՝ 6 սովորող,
3. 3-րդ կուրս՝ 5 սովորող:

Անվճար ուսուցման ձևից ակադեմիական պարտքերի մարման 2-րդ փուլի արդյունքներով 2 սովորող (2-րդ և 3-րդ կուրսերի) անբավարար առաջադիմության հիմքով ազատվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայից:

Վճարովի՝

1. 1-ին կուրս՝ 19 սովորող,

2. 2-րդ կուրս՝ 12 սովորող,
3. 3-րդ կուրս՝ 2 սովորող:

Վճարովի ուսուցման ձևից ակադեմիական պարտքերի մարման 2-րդ փուլի արդյունքներով 1-ին կուրսի 4 սովորող անբավարար առաջադիմության հիմքով ազատվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայից:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են առկա անվճար ուսուցման 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնական և առկա անվճար ու վճարովի ուսուցման 4-րդ կուրսերի նախաավարտական պրակտիկաները: Անցկացվել է պրակտիկայի պաշտպանություն:

2017 թ. դեկտեմբերի 15-ից սկսվել է ստուգարքային շրջան, որը ընթացքի մեջ է:

Հեռակա ուսուցման ֆակուլտետ

2017թ. հունվար-փետրվար ամիսներին կայացել է ֆակուլտետի քննաշրջանի արդյունքում առաջացած ակադեմիական պարտքերի 1-ին և 2-րդ վերահանձնումները, որին մասնակցել են 19 սովորող, 17-ը՝ ստացել են դրական, իսկ 2 սովորող ազատվել են ակադեմիայից անբավարար առաջադիմության պատճառով:

/Ն/ժ. 2016 թվականի փետրվարին տարբեր կուրսերի 11 սովորող վերահանձնել են 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի ակադեմիական պարտքերը:/

2017 թվականի սկզբում հեռակա ուսուցման ֆակուլտետն ունեցել է 260 սովորող:

/Ն/ժ. 2016թ. սկզբում հեռակա ուսուցման ֆակուլտետն ունեցել է 244 սովորող:/

2017թ. 1-ին կիսամյակի ուսումնաքննական հավաքը սկսվել է փետրվարի 14-ին և ավարտվել հունիսի 16-ին:

/Ն/ժ 2016թ. 1-ին կիսամյակի ուսումնաքննական հավաքը սկսվել է փետրվարի 15-ին և ավարտվել հունիսի 3-ին:/

2017 թ. ընթացքում 3 սովորող վերականգնվել են համապատասխան կուրսերում, 1 սովորող առկա վճարովի ուսուցման 2-րդ կուրսից տեղափոխվել է հեռակա ուսուցման 2-րդ կուրս, 2 սովորող ազատվել են ակադեմիայից անբավարար առաջադիմության պատճառով, 2 սովորող ոստիկանությունում ծառայությունից ազատվելու պատճառով ազատվել են կրթահամալիրի ակադեմիայից:

/Ն/ժ 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում 3-րդ կուրսից 1 սովորող, 2-րդ կուրսից 2 սովորող ոստիկանությունում ծառայությունից ազատվելու պատճառով ազատվել են նաև ակադեմիայից: 8 սովորող՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերից 2-ական սովորողներ անբավարար առաջադիմության պատճառով ազատվել են ակադեմիայից: 1 սովորող առկա ուսուցման 2-րդ կուրսից տեղափոխվել է հեռակա ուսուցման 2-րդ կուրս, մեկ սովորող վերականգնվել է 4-րդ կուրս/:

2017 թվականի հունիսին անցկացվել է 5-րդ կուրսի (28 սովորող) ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող սովորողների նախաավարտական պրակտիկայի դիֆերենցված ստուգարքը, բոլորը ստացել են դրական գնահատականներ:

2017 թվականի 1-ին կիսամյակում ամփոփիչ ատեստավորմանն են մասնակցել 56 շրջանավարտներ, 2-ը չեն անցել ամփոփիչ ատեստավորումը, այդ թվում 3-ը արժանացել են գերազանցության դիպլոմի:

/Ն/ժ 2016 թվականի 43 շրջանավարտ և նախորդ ուստարվա մեկ շրջանավարտ անցել են ամփոփիչ ատեստավորումը և վերաատեստավորումը/:

2017 թվականի սեպտեմբերի 12-ից իրականացվում են հեռակա ուսուցման ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաքննական հավաքները:

2017թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետում ըստ կուրսերի սովորում են՝

2-րդ կուրս՝ 67 սովորող,
3-րդ կուրս՝ 54 սովորող,
4-րդ կուրս՝ 45 սովորող,
5-րդ կուրս՝ 37 սովորող:

2017 թվականի հոկտեմբերին 2-րդ կուրսից 1 սովորող ոստիկանությունում ծառայությունից ազատվելու պատճառով ազատվել է կրթահամալիրի ակադեմիայից:

ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրով հեռակա անվճար ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներով ընդունվել են 67 ոստիկանության ծառայողներ:

1-ին կուրսի ուսումնաքննական հավաքը սկսվել է դեկտեմբերի 4-ին և ընթացքի մեջ է:

ՈՋ հրամանատարական ֆակուլտետ

Ֆակուլտետը մայիսին մասնակցել է ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կազմակերպված միջբուհական գիտամեթոդական կոնֆերանսին: Կոնֆերանսում, Գ. Թադևոսյանի ղեկավարությամբ, սովորող Յու. Սրապիոնյանի կողմից ներկայացվել է զեկույց՝ «Զինվորական կոլեկտիվում միջանձնային կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց հաղթահարման մանկավարժահոգեբանական ուղիները» թեմայով:

Սեպտեմբերին կազմակերպել է ՀՀ ոստիկանության զորքերի ավագ և կրտսեր սպայական կազմի պաշտոններ զբաղեցնող զինծառայողների վերապատրաստման դասընթաց:

Դասընթացներին մասնակցել է 1 խումբ (11 զինծառայող):

Մագիստրատուրայի բաժանմունք

2017թ. հունվար ամսվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել է 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի առկա ուսուցման սովորողների քննաշրջանը, որին մասնակցել է թվով 14 սովորող (10 սովորող՝ առկա ուսուցման 1-ին կուրս, 4 սովորող՝ առկա ուսուցման 2-րդ կուրս):

Բոլորը ստացել են դրական գնահատականներ:

/Ն.Ժ.2016թ. մասնակցել է թվով 9 սովորող (5 սովորող՝ առկա ուսուցման 1-ին կուրս, 4 սովորող՝ առկա ուսուցման 2-րդ կուրս): Բոլորը ստացել են դրական գնահատականներ/:

2017թ. հունվար ամսվա ընթացքում կազմակերպվել է նաև բաժանմունքի հեռակա ուսուցման սովորողների 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնումը, իսկ փետրվարին՝ 2-րդ վերահանձնումը, որոնց մասնակցել են թվով 5 սովորող (բոլոր սովորողները հեռակա ուսուցման 2-րդ կուրսից են, այդ թվում մեկ սովորող մասնակցել է երկրորդ վերահանձնմանը): Արդյունքում բոլոր սովորողները ստացել են դրական գնահատականներ:

/Ն.Ժ.2016թ. վերահանձնումներին մասնակցել են թվով 4 սովորող (բոլոր սովորողները հեռակա ուսուցման 2-րդ կուրսից են, այդ թվում 3 սովորող մասնակցել են երկրորդ վերահանձնմանը): Արդյունքում բոլորը ստացել են դրական գնահատականներ:

Հուլիսին կազմակերպվել և անցկացվել է մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի սովորողների 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանը, որի արդյունքում երկու սովորող ստացել են անբավարար գնահատական(հոկտեմբեր ամսին վերահանձնել են և ստացել դրական գնահատական):

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի համապատասխան հրամանով ակադեմիայի մագիստրատուրայի առկա անվճար ուսուցման 1-ին կուրս են ընդունվել 8 ոստիկանության ծառայող: Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է նրանց գիտական թեզերի թեմաների ընտրության և ակադեմիայի խորհրդով թեմաների և ղեկավարների հաստատման գործընթացը:

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է հեռակա ուսուցման 2-րդ և 3-րդ կուսերի ուսումնաքննական հավաքները:

Հոկտեմբեր ամսին մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրս են ընդունվել 30 սովորող, որից 24-ը ոստիկանության ծառայողներ են: Վերջիններիս ուսումնաքննական հավաքը, թեզերի թեմաների ընտրությունը և ղեկավարների հաստատումը կազմակերպվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Դեկտեմբերի 1-ին տեղի է ունեցել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 3-րդ՝ ավարտական կուրսի սովորողների թեզերի պաշտպանությունը: 3 սովորողներ արժանացել են գերազանցության դիմպլոների:

7. Քոլեջ

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են կրթահամալիրի քոլեջի ուսումնական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի աշխատանքային պլաններով նախատեսված բոլոր միջոցառումները: Հսկողություն է իրականացվել ուսումնական պարապմունքների նկատմամբ: Պարբերաբար քննարկվել են սովորողների առաջադիմությունը, կատարվել են համեմատական վերլուծություններ նախորդ ՝ 2015-2016 ուստարվա հետ, վերլուծվել են դրանց արդյունքները, ինչի վերաբերյալ տեղեկանքներ են ներկայացվել կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչություն:

Հունվարի 1-ի դրությամբ քոլեջի 1-ին կուրսի սովորողների թիվը կազմել է 75 անձ: Նրանցից 67-ը շարունակել են ուսուցումը 2-րդ կիսամյակում, իսկ 8 սովորողներ անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ազատվել են Կրթահամալիրից:

Քննաշրջանի արդյունքներով 1-ին կուրսի 1-ին կիսամյակում 6 սովորող ցուցաբերել են գերազանց, 9 սովորող՝ լավ, 23 սովորող՝ բավարար, 37 սովորող անբավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 5.73, 2-րդ դասակ - 5.91, 3-րդ դասակ - 5.94:

/Ն.ժ.2016թ քննաշրջանին մասնակցել են 40 սովորող, անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով քոլեջից ազատվել են 4-ը,8 սովորող ցուցաբերել են գերազանց, 9 սովորող՝ լավ, 8 սովորող՝ բավարար, 15 սովորող՝ անբավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 7, 2-րդ դասակ – 7.18/:

Հունվարի 1-ի դրությամբ քոլեջի 2-րդ կուրսի սովորողները եղել են 36-ը, որոնք շարունակել են ուսուցումը 2-րդ կիսամյակում: 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 10 սովորողներ ցուցաբերել են գերազանց, 3 սովորող՝ լավ, 11 սովորող՝ բավարար առաջադիմություն, 12 սովորող՝ անբավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 7.08, 2-րդ դասակ - 6.26:

Ն.ժ. 2016թ քննաշրջանին մասնակցել են 29 սովորող որոնցից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 4-ը, 3 սովորող՝ լավ, 15 սովորող՝ բավարար, 7 սովորող՝ անբավարար առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.72, 2-րդ դասակ – 7.02/:

2017 թ. փետրվարի 16-ից քոլեջում սկսվել է ուսումնական 2-րդ կիսամյակը որի քննաշրջանը 2-րդ կուրսի սովորողների մոտ ընթացել է ս.թ. ապրիլի 7-ից: Քննաշրջանի արդյունքներով 5 սովորող ցուցաբերել են գերազանց, 7 սովորող լավ, 23 բավարար առաջադիմություն: Մեկ սովորող անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով Կրթահամալիրի պետի հրամանով ազատվել է Կրթահամալիրից: Դասակների միջին առաջադիմությունը եղել է 1-ին դասակ՝ 6.62, 2-րդ դասակ - 7.2:

Ն.ժ.՝2015-2016 ուստարվա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը՝ քննաշրջանին մասնակցել են 28 սովորող որոնցից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 3 սովորող, 3 սովորող՝ լավ, 22 սովորող՝ բավարար: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.46, 2-րդ դասակ – 6.37:

1-ին կուրսի սովորողների մոտ 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանը ընթացել է ս.թ. ապրիլի 20-ից և ավարտվել է հուլիսի 12-ին: Պայմանականորեն 2-րդ կուրս փոխադրված 31 սովորողների քննությունների վերահանձնումը կազմակերպվել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Քննաշրջանի արդյունքներով 10 սովորող ցուցաբերել են գերազանց, 6 լավ, 48 բավարար առաջադիմություն, 3 սովորող ցուցաբերել են անբավարար առաջադիմություն և ազատվել են կրթահամալիրից: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.10, 2-րդ

դասակ – 5.70, 3-րդ դասակ- 6.28: Մեկ սովորորողի Կրթահամալիրի պետի հրամանով տրամադրվել է ակադեմիական արձակուրդ:

Ն.ժ 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակում 1-ին կուրսի քննաշրջանի արդյունքները եղել են հետևյալը՝ քննաշրջանին մասնակցել են 36 սովորող որոնցից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 6 սովորող, 4 սովորող՝ լավ, 26 սովորող՝ բավարար: Քննաշրջանի արդյունքներով (գնահատման 10 բալային համակարգով) դասակների միջին գնահատականը եղել է հետևյալը ՝ 1-ին դասակ – 6.98, 2-րդ դասակ – 6.87:

8. Ուսումնական կենտրոն

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնական կենտրոնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամաններով թվով **307**/ ն.ժ.2016թ 405/ սովորող ընդգրկվել է «Ոստիկան» որակավորման դասընթացներին /4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասակներ/: Նրանցից 8-ն ազատվել են ուսման ընթացքում, որից 4-ն՝ անբավարար առաջադիմություն ցուցաբերելու համար, 4-ն՝ անձնական նախաձեռնությամբ: Ուսուցումն ավարտել են 227-ը ուսուցումը շարունակում են 72-ը / ն.ժ.2016թ 405**,** որից ավարտել են 318, 6-ն ազատվել են անբավարար առաջադիմություն ցուցաբերելու համար, 2-ն՝ անձնական նախաձեռնությամբ, ուսուցումը շարունակել են 79-ը/:
- Մշտապես հսկողություն է իրականացվել սովորողների ուսումնառության ընթացքի, հաճախումների, առաջադիմության և ուսման հետ կապված աշխատանքների կատարման նկատմամբ:
- Կազմակերպվել և իրականացվել է «Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների» ուսուցման գործընթացը. ընդհանուր թվով 148 աշխատակից / ն.ժ.2016թ 156/**:**
- Համաձայն ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամանի, ուսումնական կենտրոնում իրականացվել է կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստում՝ թվով 4 ուսումնական դասակում /ն.ժ.2016թ 8 դասակ/:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնական կենտրոնում դասընթացներ են անցել ընդհանուր թվով 544 / ն.ժ.2016թ 705/ սովորողներ և աշխատակիցներ, որոնցից՝

- Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկան» որակավորման եռամսյա ծրագրով՝ 307 սովորողներ,
- Կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստում՝ 89 / ն.ժ.2016թ 144/ ծառայող,
- Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցներ՝ 148 /156/:

9. Ծառայության բաժին

Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի ծառայության բաժնի կողմից կատարվել են կազմակերպչական, դաստիարակչական, ծառայողական, կուլտուր-մասսայական, տնտեսական և սպորտային միջոցառումներ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի ծառայողների կողմից սովորողների հետ անցկացվել են շարային, ինչպես նաև ՈԶ տակտիկական պատրաստականության պարապմունքներ:

Թարմացվել է «Հավաք» ազդանշանով կրթահամալիրի հերթապահի առաջնահերթ գործողությունների վերաբերյալ հրահանգը, «Հավաք» ազդանշանի ժամանակ անձնակազմի ծանուցման սխեման, անձնակազմի հիշեցման թերթիկները, կրթահամալիրի օրակարգը, ինչպես նաև կրթահամալիրի «Արտակարգ իրավիճակներում գործելու» օրացուցային, «Տարահանման»,«Խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման» պլանը,ինչպես նաև ՀՀ ոստիկանության ՀԿՊ պահեստային գումարտակի անձնակազմի ցուցակները:

Հաշվետու ժամանակահատվածում ծառայության բաժնի ծառայողները սահմանել են մշտական հսկողություն կրթահամալիրում աշխատանքնային և ուսումնական կարգապահությունը բարձրացնելու նպատակով: Ծառայության բաժնի ղեկավարությունը կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի սովորողների հետ անցկացրել է զրույցներ միջանձնային հարաբերությունների, բարոյահոգեբանական մթնոլորտի, էթիկայի և հայրենասիրության թեմաներով:

Լրամշակվել և հաստատման են ներկայացվել ծառայության բաժնի ծառայողների գործառութային պարտականությունները:

2017թ. ընթացքում կրթահամալիրի սովորողները և ծառայության բաժնի ծառայողներն ակտիվորեն մասնակցել են՝

– փետրվարի 11-ին Երևան քաղաքում անցկացված «Սուրբ Սարգիս Զորավարի» օրվան նվիրված տոնակատարությանը,
– մարտի 25-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացված շաբաթօրյակին,
– ապրիլի 15-ին Երևան քաղաքում անցկացված «Կանթեղներով երթին»,
– մայիսի 27-ին անցկացված համապետական շաբաթօրյակին:

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 21.01.2017թ. թիվ 101-Ա հրամանի՝ նշված ժամանակահատվածում, 2017թ. ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների և 2017թ. մայիսի 14-ին Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ընթացքում տեղամասերում պատշաճ հասարակական կարգ և հասարակական անվտանգություն ապահովելու նպատակով ՀԿԱ վարչություն է ներկայացվել ծառայողների և սովորողների ցուցակները:

Կրթահամալիրի ծառայության բաժնի ծառայողների կողմից տեղամասերում պատշաճ հասարակական կարգ և հասարակականան անվտանգություն ապահովելու ընթացքում միջադեպեր և իրավախախտման դեպքեր չեն արձանագրվել:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և կազմվել է կրթահամալիրի ծառայության բաժնի կուրսի պետերի 2016-2017թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի, ինչպես նաև 2017-2018թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պլանները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում օգոստոսի 24-ին ՀՀ ոստիկանության ԶԱՔՊ բաժնի և ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի կողմից կազմակերպվել և անցկացվել է ՀՀ ոստիկանության պահեստային կառավարման կետի անձնակազմի ուսումնական վարժանք:

ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ մասից սեպտեմբերի 6-ից 7-ը տրվել է «Հավաք», այնուհետև «Տագնապ» ազդանշաններ, որի ժամանակ կրթահամալիրի անձնակազմի ներկայությունն ապահովել է 100%-ով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից սեպտեմբերի 25-ին ժամը 07:00-ին տրվել է «Հավաք» ազդանշան, ժամը 08:30-ի դրությամբ կրթահամալիրի անձնակազմի ներկայությունը կազմել է 98%, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան շարային տեղեկանք:

Ծառայության բաժնի ծառայողների զեկուցագրերի հիման վրա 2017 թվականի 12 ամիսների ընթացքում խրախուսվել են 96, իսկ կարգապահական տույժի են ենթարկվել 5 սովորողներ:

10. Տնտեսական բաժին

– Կազմակերպվել է կրթահամալիրի կարիքների համար 2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հանձնման-ընդունման աշխատանքները,

– Կազմակերպվել և իրականացվել է 2017թ. գնումների պլանով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, մատուցման և կատարման հայտերի կազմումը,

– Իրականացվել է կրթահամալիրի 9 հարկանի մասնաշենքի 6-րդ, 7-րդ հարկերի կապիտալ վերանորոգման աշխատանքները,

– Կազմակերպվել է կրթահամալիրի տարածքի մաքրման, ծառերի էտման, այգիների մշակման և ոռոգման ջրագծերի վերանորոգման աշխատանքները,

– Կազմակերպել կրթահամալիրի գույքի ստացման, տեղափոխման, բաշխման, պահպանման և հատկացման աշխատանքները,

– Իրականացվել է կրթահամալիրի տարածքի շենք-շինությունների մաքրության, ինժեներական կոմունիկացիաների տեխնիկական վիճակի բարելավման, սարք սարքավորումների վերանորոգման աշխատանքներ,

– Իրականացվել է կրթահամալիրի կանաչապատման, տարածքների ոռոգման, հարդարման և պահպանման աշխատանքները,

– Կազմակերպվել և իրականացվել է կրթահամալիրի թվով երկու կաթսայատների շահագործման աշխատանքները,

– Կազմակերպվել է ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունից զենք-զինամթերքի ստացման և պահեստավորման աշխատանքները,

– Կատարվել է զենք-զինամթերքի պահեստի ստուգումներ, զինամթերքի առկայության, անվտանգության և պահեստի մաքրության վերաբերյալ,

– Կազմակերպվել է կրթահամալիրի մշտական և փոփոխական անձնակազմին համազգեստի հատկացումները,

– Կազմակերպվել է կրթահամալիրի անձնակազմի գեղագիտական զարգացման, ուսումնամեթոդական տեսաֆիլմերի և կինոֆիլմերի ցուցադրումը,

– Իրականացվել է կրթահամալիրի 9 հարկանի մասնաշենքի տանիքի կապիտալ վերանորոգման աշխատանքները,

– Կազմակերպվել է կրթահամալիրի հերթապահ մասի և «Ոստիկանության զորքեր» մասնաշենքի 2-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքների գործընթացը:

11. Քարտուղարություն

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քարտուղարության փաստաթղթաշրջանառությունն ունեցել է հետևյալ տեսքը:

- Ելք է արվել այլ ստորաբաժանումներ և գերատեսչություններ 2353 ոչ գաղտնի/ն.ժ. 2016թ - 2777/ և 428 գաղտնի /ն.ժ. 2016թ - 428/ փաստաթուղթ:
- Մուտք են արվել 1600 ոչ գաղտնի /ն.ժ. 2016թ - 1257/ և 655 գաղտնի /ն.ժ. 2016թ - 700/ փաստաթուղթ, ՀՀ ոստիկանության պետի անհատական հույժ գաղտնի հրաման 2 /ն.ժ. 2016թ - 1/, 15 անհատական գաղտնի /ն.ժ. 2016թ – 15/, 0 նորմատիվ գաղտնի /ն.ժ. 2016թ - 1/, 4 նորմատիվ ոչ գաղտնի /ն.ժ. 2016թ - 5/ ու 550 անհատական ոչ գաղտնի /ն.ժ. 2016թ - 509/ հրամաններ և 10 ոչ գաղտնի ցուցումներ /ն.ժ. 2016թ - 6/:
- Գրանցվել է 900 դիմում /ն.ժ. 2016թ – 1007 դիմում/: